



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

22 փետրվարի 2016 թ. № 34 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ
«ՀԱՇՄԱՆՊԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿ»
ՄՐՑՈՒՅԹԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թվականի մայիսի 20-ի «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում Հանրապետության Նախագահի մրցանակներ հիմնելու մասին» ՆԿ-113-Ն կարգադրության 1-ին կետի «ե» ենթակետի՝ *հրամայում եմ՝*

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի 2016 թվականի կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված խաղերն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի № 1 հավելվածի № 1 աղյուսակի 08 բաժնի 01 խմբի 01 դասի «20. «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում» ծրագրի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Սպորտի և երիտասարդական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Խաչիկ Ասրյանին:



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ
«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿ»
2016 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ

1. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նպատակներն են՝ բնակչության առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, հաշմանդամ մարդկանց հասարակությանը ինտեգրման գործընթացի խթանում:

2. Մրցույթի խնդիրներն են՝

1) բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, սոցիալական հավասարության խթանում, հաշմանդամային սպորտի մասսայականացում.

2) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում և հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրում:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՅԿԱՑՈՒՄԸ

3. Մրցույթի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

3. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԱՆՅԿԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՎԱՅՐԸ

4. Մրցույթն անցկացվելու է մեկ փուլով, «Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր» պետական փակ բաժնետիրական ընկերությունում, օգոստոս ամսին:

5. Մրցույթին մասնակցում են լողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ ունեցող և մտավոր սահմանափակումներ ունեցող անձինք:

6. Մրցույթն անցկացվելու է 7 մարզաձևերից՝ բասկետբոլ, սեղանի թենիս, շախմատ, լող, շաշկի, դարթս, եռամարտ մտավոր սահմանափակումներ ունեցող անձանց համար և եռամարտ լողական խնդիրներ ունեցող անձանց համար:

7. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզից կմասնակցեն ընդամենը 9 մասնակից և 1 ներկայացուցիչ, որոնցից լողական խնդիրներ ունեցող 1 տղա և 1 աղջիկ

կմասնակցեն եռամարտից, իսկ սեղանի թենիս, շախմատ, շաշկի, դարթս, լող (միայն տղա), մարզաձևերից կմասնակցեն 4 տղա և 3 աղջիկ:

8. Երևան քաղաքը սեղանի թենիս, շախմատ, շաշկի, լող և դարթս մարզաձևից կմասնակցի երկու թիմերով՝ N° 1 և N° 2: N° 1 թիմը կմասնակցի թիմային հաշվարկով, իսկ երկրորդ թիմը կմրցի անհատական մրցաձևերում: Ընդամենը՝ 18 մասնակից և 2 ներկայացուցիչ:

Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի մասնակցելու միայն մեկ մարզաձևում:

9. Բասկետբոլի մրցումներին կմասնակցի 4 թիմ: Թիմի կազմը՝ 7 տղա, 1 ներկայացուցիչ: Միաժամանակ անցկացվելու է շախմատի մրցաշար կույրերի համար, եռամարտ՝ լսողական խնդիրներ ունեցող անձանց համար (վազք 50 մետր, հեռացատկ տեղից, թենիսի գնդակի նետում) և եռամարտ մտավոր սահմանափակումներ ունեցող անձանց համար (վազք 30 մետր, հեռացատկ տեղից և թենիսի գնդակի նետում):

10. Մրցույթի յուրաքանչյուր մարզաձևում որոշվում են 1-ինից 12-րդ տեղերը հետևյալ կերպ՝

1-ին տեղ՝ 12 միավոր, 2-րդ տեղ՝ 11 միավոր, և այդպես մինչև 12-րդ տեղը:

11. Մրցույթի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովը:

12. Մրցույթի ծրագիրը և մրցումների անցկացման պայմանները

1.	Շախմատ (անհատական մրցումներ) (տղա, աղջիկ)	-	Մրցումներն անցկացվում են օլիմպիական մրցակարգով, վիճակահանությամբ, խաղի տևողությունը՝ 20-ական րոպե:
	Շախմատ (միայն տեսողության խնդիրներ ունեցող անձանց)	-	Մրցումներն անցկացվում են գործող կանոնների համաձայն, շրջանային մրցակարգով, վիճակահանությամբ:
2.	Սեղանի թենիս (տղա, աղջիկ)	-	Մրցումներն անցկացվում են սեղանի թենիսի գործող կանոնների համաձայն, վիճակահանությամբ, երեք խաղափուլով, 2:0 հաշվի դեպքում երրորդ խաղը չի անցկացվում:
3.	Շաշկի (անհատական մրցումներ) (տղա, աղջիկ)	-	Մրցումներն անցկացվում են շաշկու գործող կանոնների համաձայն, օլիմպիական մրցակարգով, վիճակահանությամբ:
4.	Դարթս (անհատական մրցումներ) (տղա, աղջիկ)	-	Մրցումներն անցկացվում են վիճակահանությամբ, երկու փուլով: 1-ին փուլում որոշվում է առավելագույն միավոր հավաքած վեցնյակը, որն էլ անցնում է եզրափակիչ փուլ: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի կատարելու 15 նետում:
5.	Լող 50 մետր (տղաներ)	-	Մրցումներն անցկացվում են լողի գործող կանոնների համաձայն, վիճակահանությամբ: Մրցանակային տեղերը որոշվում են ցույց տված լավագույն արդյունքով: